ՍՐԲԱԶԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

«Մեր Եկեղեցու ավանդությունը, որ ունենք,
Աստվածաշունչ Գրքերի վկայությամբ է հաստատված»:
Սուրբ Ներսես Շնորհալի (1102-1173 թթ.)

Սրբազան Ավանդությունը առաքյալների եւ Եկեղեցու Հայրերի միջոցով փոխանցված ուսմունքների եւ բանավոր ավանդությունների ամբողջությունն է, որը վկայված չէ Սուրբ Գրքում, սակայն ամբողջապես հենվում է Սուրբ Գրքի գաղափարախոսության վրա: Սրբազան Ավանդությունն ու Սուրբ Գիրքը կազմում են քրիստոնեության վարդապետության եւ հոգեւոր իշխանության հիմքը: Ավանդությունը, ընդհանրապես, պատմականորեն ձեւավորված ու հաջորդաբար փոխանցվող սովորույթների, չգրված օրենքների, ավանդույթների, կենցաղային կանոնների եւ այլնի ամբողջությունն է: Բողոքականները, միայն Սուրբ Գրքին կառչելով, չեն ընդունում Սրբազան Ավանդությունը, սակայն դրանով նրանք մերժում են առաքելահաստատ այն ժառանգությունը, որը Եկեղեցու կյանքն է սահմանել: Ավանդությունն ավելի հին է, քան Աստվածաշունչ Մատյանը. հազարավոր տարիներ մարդկությունն առաջնորդվել է առանց գրավոր օրենքի՝ առաջնորդվելով ներանձնական բարոյական օրենքով: Ակնհայտ է, որ մարդիկ նախքան գրավոր օրենքը կրթվում էին բանավոր Ավանդությամբ, որը պահպանվում էր հետագա սերունդների կյանքում:

Սուրբ Գրքում բազմիցս է խոսվում Սրբազան Ավանդության մասին: Օրինակ՝ Աստված Մովսեսին Օրենքը հայտնելուց հետո թույլ է տալիս, որ իսրայելացիներն իրենց սերունդներին պատմեն այն ամենն, ինչ իրենք են սովորել եւ, որպես աստվածային իմաստություն, փոխանցեն իրենց հետնորդներին (տե՛ս Բ Օր. 4:9): Նախքան, Օրենքի փոխանցումը, սակայն, օրինակ, զոհասեղան կառուցելու անհրաժեշտության ու կերպի մասին հինկտակարանյան նահապետներն առաջնորդվում էին բանավոր ավանդությամբ. հիշենք այստեղ Նոյի եւ Աբրահամի զոհասեղան պատրաստելու օրինակները (տե՛ս Ծն. 8:20, 12:6-7):

Սերնդեսերունդ ավանդությունը փոխանցելու սկզբունքը տեղ գտավ նաեւ Նոր Ուխտի շրջանում: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, գրավոր ոչինչ չթողեց, այլ քարոզեց Ավետարանը բերանացի եւ նույնն էլ իր առաքյալներին պատվիրեց (տե՛ս Մարկ. 16:15): Կենդանի քարոզության միջոցով մարդկանց մեջ հաստատվեց Աստծո նկատմամբ հավատքը, եւ հիմնադրվեց Տիրոջ եկեղեցին: Հիսուս Քրիստոսի Համբարձումից շուրջ 30 տարի հետո միայն սկսեցին գրվել Նոր Կտակարանի առաջին գրքերը. Որովհետեւ մինչ այդ բանավոր Ավանդությամբ էր Հիսուս Քրիստոսի վարդապետությունը փոխանցվում: Սուրբ Պողոսի թղթերից տեղեկանում ենք, որ առաքյալը կարեւոր էր համարում ո՛չ միայն այն, ինչ իր համայնքին փոխանցել էր իր թղթերի միջոցով, այլեւ ավանդությունը՝ պատգամի, հանդիմանության, ուսուցման տեսքով, ինչ որ բերանացիորեն փոխանցել էր նրանց այցելելիս: Թղթերից մեկում էլ (տե՛ս Բ Տիմ. 3:8) Պողոսը հիշատակում է Հանես ու Համրես կախարդներին, որոնց մասին Հին Կտակարանում չկա որեւէ հիշատակություն. նա այդ անունները վկայակոչում է բանավոր Ավանդությունից լսած լինելով: Առաքյալները եկեղեցիներ էին հիմնադրում ոչ թե գրավոր կարգադրություններ կատարելով, այլ կենդանի քարոզությամբ փոխանցում էին իրենց նշանակած եպիսկոպոսներին ու քահանաներին այն ամենը, ինչ որ պետք էր իմանալ Աստծո հանդեպ անեղծ հավատքի, եկեղեցու ծիսակարգի, կանոնական կյանքի եւ այլ եկեղեցական գործերի համար. նրանք առաջնորդվում էին Սուրբ Հոգուց մղված:

Ավանդությունը Սուրբ Հոգու պարգեւն է, կենդանի փորձառություն, որը վերապրվում եւ նորոգվում է ժամանակի ընթացքում: Դա ճշմարիտ հավատքն է, որը Սուրբ Հոգով բացահայտվում է Աստծո ժողովրդին, ըստ սուրբ Բարսեղ Մեծի՝ Ավանդությունը Սուրբ Հոգու շարունակական ներկայությունն է մեր մեջ (Սուրբ Հոգու մասին, XV):

Այսօր շատ պատմություններ մեզ փոխանցվել են ավանդաբար, ինչպես օրինակ սուրբ Մարիամ Աստվածածնի՝ Տաճարին ընծայման, Վերափոխման, Երեւման Սուրբ Խաչի եւ այլ տոների պատմությունները, կամ որ մանուկ Հիսուսին Տաճարի ընծայման ժամանակ ընդառաջ գնացող Սիմեոն Ծերունին Ք.ա. III դարում Եգիպտոսի Պտղոմեոս թագավորի հրամանով Հին Կտակարանի գրքերը եբրայերենից հունարեն թարգմանած 72 թարգմանիչ դպիրներից մեկն էր:

Տակավին IV դարում Նիկիական հավատքի պաշտպան սուրբ Աթանաս Մեծն անդրադառնում է Սրբազան Ավանդությանը եւ այսպես բնորոշում այն. «Եկեք նայենք հենց սկզբից ընդհանրական եկեղեցու ավանդությանը, ուսմունքին եւ հավատքին, որը տվել է Լոգոսը, առաքյալները քարոզել են, իսկ հայրերը՝ պահպանել: Դրա վրա է Եկեղեցին հիմնադրվել» (Ս. Աթանաս, Առ Սերապիոն Ա, 28):

Այն, որ Ավետարաններում ամեն բան չէ, որ արձանագրված է, մենք տեղեկանում ենք ավետարանական հիշատակություններից. «Հիսուսն իր աշակերտների առաջ ուրիշ շատ հրաշքներ էլ գործեց, որոնք այս գրքում գրված չեն: Բայց սրանք գրվեցին, որպեսզի հավատաք, որ Հիսուսն է Քրիստոսը՝ Աստծու Որդին, եւ որպեսզի հավատաք ու նրա անունով հավիտենական կյանք ունենաք» (Հովհ. 20:30-31); «Բայց ուրիշ շատ բաներ էլ կան, որ Հիսուսն արեց, որոնք եթե մեկ առ մեկ գրված լինեին, կարծում եմ, թե աշխարհն էլ բավական չէր լինի այդ գրքերը պարփակելու» (Հովհ.21:25): Իսկ թե որքան մեծ տեղ է զբաղեցնում Սրբազան Ավանդությունը քրիստոնեական եկեղեցում, դա շատ պարզորոշ երեւում է նաեւ առաքյալների խոսքերից: Առաքելական թղթերում եւս հաճախակի շեշտվում է Սրբազան Ավանդության բացառիկ դերը (տե՛ս Ա Կորն. 11:2, Ա Տիմ. 6:20, Բ Տիմ. 2:2):

19-րդ դարի Հայ Եկեղեցու նշանավոր աստվածաբան Արշակ Տեր-Միքելյանը (1864-1901 թթ.) «Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը» գրքում Սրբազան Ավանդությունը ներկայացնելիս այն զանազանում է մի քանի տեսակների՝ 1. **դավանական**, որի հիմքը Հավատո հանգանակներում, Ժամագրքում, ծիսարաններում, Հայ Եկեղեցու Հայրերի գրվածներում առկա նյութերն են; 2. **շնորհաբաշխական**, որը վերաբերում է յոթը խորհուրդների կատարմանը; 3. **վարդապետական**, որով իմանում ենք Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու բարոյական ու դավանական ուսմունքները; 4. **վարչական կամ կրոնական**, որոնցով որոշվում են հոգեւորականների եւ աշխարհականների պարտավորությունները եւ իրավունքները; 5. **աստվածպաշտական**, որ ցույց է տալիս, թե ինչպե՛ս պետք է աղոթել, եկեղեցում կանգնել, խնկարկել եւ այլն; 6. **պարագայական սրբազան ավանդություն**, որով իմանում ենք Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու ճարտարապետության, անոթների, արդ ու զարդի, զգեստների, գույքի եւ այլ պարագաների մասին; 7. **պատմական**, որով ծանոթանում ենք քրիստոնեական հին կյանքի, նահատակների սխրագործություններին եւ հնախոսական այլ իրողությունների մասին:

Ավանդությունները նաեւ տարբերակվում են՝ ըստ ավանդատուի. այսպես՝ 1. **քրիստոսավանդ**- այն, ինչ որ փոխանցվել է Քրիստոսի կողմից առաքյալներին եւ ժողովրդին, սակայն դրա մասին չի գրվել Նոր Կտակարանում: 2. **առաքելական**- առաքյալների՝ Քրիստոսի կողմից Իրեն հաջորդներ նշանակված անձանց եւ Եկեղեցու հիմնադիրների կողմից փոխանցված հրահանգներն են, որոնք տեղ են գտել ծիսական եւ ժողովական տարբեր կանոններում: 3. **եկեղեցական**- սրանք Եկեղեցու հետագա հովիվների, հայրապետների կողմից փոխանցված ավանդություններն են, օրինակ՝ մեր Եկեղեցու ավանդությունների մեծ մասը (տոների հաստատում, շաբաթապահքերի դրություն, խաչակնքում, եկեղեցական արարողությունների սահմանում եւն) գալիս է սուրբ Գրիգոր Լուսավորիչ առաքելաշավիղ Հայրապետի սահմանումներից եւ կարգավորությունից:

Այսպիսով՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, հավատարիմ առաքյալների ավանդներին, մեծ տեղ է տալիս Սրբազան Ավանդությանը եւ իր ծիսա-պաշտամունքային, կանոնական, վարչական եւ արարողակարգային կյանքը կազմակերպում է ըստ Սուրբ Հայրերի ավանդի եւ բանավոր ավանդության. «Արդ, եղբայրնե՛ր, հաստատո՛ւն մնացեք եւ պի՛նդ պահեք այն ավանդությունները, որ սովորել եք թե՛ խոսքով, թե՛ մեր նամակով» (Բ Թես. 2:15):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Սբ. Ներսես Շնորհալի,** *Թուղթ ընդհանրական*, Գրաբարից արեւելահայերեն թարգմ.՝ Տեր Մ. քահանա Արամյանի, Տ. Խաչատրյանի, Ս. Ստամբոլցյանի, : Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2023:
2. **Արշակ Տեր-Միքելյան,** *«Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը»,* Մայր Աթոռ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, 2007:
3. **Fr. Tadros Y. Malaty,** *Tradition and Orthodoxy*, St George Coptic Church Sporting – Alexandria, 1979.
4. https://www.armenianchurchlibrary.com/files/SaintsandSacramentsoftheArmenianChurchAbpKaloustian.pdf
5. **https://surbzoravor.am/post/view/srbazan-avandutyun-ar%D5%AAeqavor-%D5%AAarangutyun**
6. **https://www.goarch.org/-/tradition-in-the-orthodox-church**